



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N _____

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☎ (374-10) 65-05-53, 65-46-95

“ ___ “ _____ 2019թ.

Ֆաքս. (374-10) 65-16-60

Էլ. փոստ info@hlib.am

«ՍՈՑԻՈՍԿՈՊ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ԾՐԱԳՐԵՐԻ ՏՆՕՐԵՆ ՆՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
Էլ. փոստ nvard@socioscope.am

Հարգելի տիկին Մարգարյան

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին (այսուհետ նաև՝ տեսչական մարմին) ուղղված Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 18-ի հարցմանն ի պատասխան՝ տեղեկացնում եմ, որ «ՍԱՍՍԵՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) աշխատողների աշխատանքի նորմալ պայմանների բացակայության վերաբերյալ լրատվամիջոցներում առկա տեղեկատվության հիման վրա, «ՍԱՍՍԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների պահպանումը պարզելու նպատակով, տեսչական մարմնի ղեկավարի 31.05.2019թ. N 1194-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում ընկերությունում արձանագրվել են աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների խախտումներ (կարի արտադրամասերն ապահովված չէին օդափոխության համակարգերով):

Աշխատատեղերում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջները պահպանելու, այն է՝ կարի արտադրամասերն օդափոխության համակարգերով ապահովելու նպատակով «ՍԱՍՍԵՔՍ» ՍՊԸ-ին,

ի դեմս տնօրեն Քրիստիան Գելեջիի, տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի հունիսի 26-ի N 01/5982-19 կարգադրագրով տրվել է առաջադրանք:

2019 թվականի հունիսի 26-ի N 01/5982-19 կարգադրագրով տրված առաջադրանքի կատարված լինելը պարզելու նպատակով՝ տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 2158-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում ընկերությունում իրականացվել է զննում:

Զննման արդյունքում պարզվել է, որ կարի արտադրամասերն օդափոխության համակարգերով ապահովելու վերաբերյալ տրված առաջադրանքն ընկերության կողմից չի կատարվել:

Վերոգրյալի հիման վրա՝ տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 01/8408-19 գրությամբ՝ կարգադրագրով տրված առաջադրանքը կատարելու և կատարման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը Տեսչական մարմնին գրավոր ներկայացնելու համար սահմանվել է ժամկետ՝ մինչև 2019 թվականի հոկտեմբերի 28-ը, միաժամանակ «ՍԱՍՍԵԲՍ» ՍՊԸ-ի տնօրեն Քրիստիան Գելեջին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի համաձայն, նախազգուշացվել է կարգադրագրով տրված առաջադրանքը չկատարելու դեպքում վարչական հարկադրանքի միջոց՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

«Սաստեքս» ՍՊԸ-ի տնօրենը 2019 թվականի հոկտեմբերի 28-ի գրությամբ տեսչական մարմնին տեղեկացրել է կարի արտադրամասերն օդափոխության համակարգերով ապահովելու վերաբերյալ՝ կից ներկայացնելով կարգադրագրի պահանջները կատարելու վերաբերյալ ապացույցներ, որի հիման վրա 2019 թվականի սեպտեմբերի 5-ին հարուցված վարչական վարույթը կարճվել է:

Շնորհակալություն համագործակցության համար,

 Recoverable Signature

X



VERIFIED OCSP 20.12.2019 11:00:43 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: AVAGYAN HAKOB 3912770166

ՀԱԿՈՐ ԱՎԱԳՅԱՆ

Կատարող՝ Ալվարո Արշակյան
Աշխատողների առողջության
պահպանման և անվտանգության ապահովման